գրեցի և ծաղկեցի գիրքս այս՝ ի դուռն Ս. Աստուածածնին, ի դառն և անբարի ժամանակիս, յորում նեղիմք ի ներքին և յարտաքին թշնամեաց։ Եւ արդ աղաչեմ զձեզ՝ ո՛վ երանեալ սուրբ ընթերցողք, յորժամ պատահիք սուրբ գրոցս, ի տեսանելն ձեր զանհեզեդ գրիկս և ծաղիկս, աղաչեմ զձեզ, մի՛ մեղադրէք. զի թէ և գոյր կարողութիւն փոքր մի այլ լաւ գրել և ծաղկել, սակայն ոչ կարացի, զի կարի ստիպ(աւ) արտորք էի՝ վասն ուսանելոյ համար լաթին լեզուին և գրին, և միայն աւարտելոյն էր փոյթ և ոչ արուեստի գրոյն և ծաղկոյն։...

Ղարիպ եմ օտար յաշխարհի,
Անարժան և յոյժ փանագի.
Մարմնովս եմ մեղօք ի լի,
Ըզհոգիս իմ խաւար լցցի։
Աղաչեմ ըզքեզ Միածին որդի,
Ըստեղծող երկնի և երկրի.
Մեղայ գոչեմ և այժմ ի լալի,
Թող զիմ մեղքն զոր ես գործեցի։
Զքեզ աղաչեմ լոյսդ հայրենի,
Յարութիւն ու կեանք մարդկայնի.
Աստէն տուր զզջումն ինձի
Փոշմնիլ զոր ինչ գործեցի։

Անճառ Միածին որդի
Որ էիր ի Հօր անմարմնի,
Խոնարհեցար յաշխարհս ստորի
Եւ առեր մարմին ի կուսի.
Րարի երկնաւոր բարի,
Գթա, Տէր, ի քո ծառայի.
Հառաչեմ ես արտասվալի,
Հաշտեա, Տէր, քո արարածի։
Իքէն հայցեմ, ո՛ փափագելի,
Տուր անմահ ջրոյդ որ եմ ծարաւի.
Մի՛ տար զմիտս զբաղումն յաշխարհի,
Այլ տուր իմացումն՝ որ միշտ քեզ հայի։

... Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս աստուածասէր տիկնոջն Կատարինէին, և առն իւրոյ Ջատկին, և ծնողացն իւր Գրիգորին և Աննային, և ամենայն արեան մերձաւորաց. նաև մեղապարտ Ղազար գրչին, և իմ ծնողացն՝ Նիկոլին և Շնոֆարին, և իմ քուրոչն Ղուտբատին։.. (Յայսմաւուրք ի Լեմպերկ։ Տես և տարի 1613. 1624. 1627. 1629).

1605.

Գրեցաւ Սաղմոսարանս՝ որ է երգ Դաւթի մարգարէին, ի կաթողիկոսութեան Տէր Մելքիսեթին, թագաւորութեան Ֆրանգաց աշխարհի Գ. Ջիկմոնդին, ի թվականութեան Հայոց ՌԾԴ, ապրիլ ամսոյ Ի, յաշխարհիս Իլախաց ի քաղաքս Կամենից. որ և երետ զսա գրել Պր. Խաչքո, որ էր որդի Պր. Ավագին, մեծաւ փափագանօք և սրտիւ յօժարութեամբ, ի վայելումն անձին իւրոյ և զաւակաց նորին. որ և Աստուած բարով վայելել տացէ նմա ընդ երկար ժամանակաւ։ Արդ գրեցաւ ձեռամբ անիմաստ և անհմուտ չքեղող (? չքերդող) Յակոբ դպրի որդւոյ Տեառն Գրիգորին։ Աղաչեմք զամենեսեան, ո՛վ ընթերցողք, որք հանդիպիք սմա տեսանելով կամ աղօթս առնելով, անմեղադիր լերուք վասն սղալանաց գրոցս, զի կար մեր այսչափ էր. զի անտեղեակ եմ ի գրոց սրբոց. բաւ է իմաստնոցն։ Եւ արդ ծաղկեցաւ ծաղկունքն դարձեալ նոյն Յակոբ դպրի ձեռամբ. և կատարեցաւ ի փառս Քրիստոսի։